

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2022թ.

N ____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Լենինգրադյան փողոցի հ.23/13 շենքի հ.4՝ 92.3ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28032014-01-0218 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մալխաս Ամոյանին:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝**

Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Լենինգրադյան փողոցի հ.23/13 շենքի հ.4՝ 92.3ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել հունահռոմեական ոճի 2021թ. Աշխարհի և 2022թ. Եվրոպայի մեծահասակների առաջնության ոսկե մեդալակիր Մալխաս Ամոյանին:

Մալխաս Բիմբաշի Ամոյանը ծնվել է 1999 թվականի հունվարի 22-ին Երևան քաղաքում:

2015–2022թթ.-ի ընթացքում դարձել է բազմաթիվ առաջնությունների հաղթող և մեդալակիր:

Մարզական նվաճումներն են՝

- 2015 թվականի պատանիների աշխարհի առաջնության բրոնզե մեդալ (3-րդ տեղ),
- 2016 թվականի պատանիների եվրոպայի առաջնության ոսկե մեդալ (1-ին տեղ),
- 2016 թվականի պատանիների աշխարհի առաջնության բրոնզե մեդալ (3-րդ տեղ),
- 2017 թվականի երիտասարդների եվրոպայի առաջնության բրոնզե մեդալ (3-րդ տեղ),
- 2017 թվականի երիտասարդների աշխարհի առաջնության արծաթե մեդալ (2-րդ տեղ),
- 2018 թվականի երիտասարդների եվրոպայի առաջնության բրոնզե մեդալ (3-րդ տեղ),
- 2018 թվականի երիտասարդների աշխարհի առաջնության ոսկե մեդալ (1-ին տեղ),
- 2019 թվականի երիտասարդների եվրոպայի առաջնության ոսկե մեդալ (1-ին տեղ),
- 2020 թվականի մեծահասակների աշխարհի անհատական գավաթի արծաթե մեդալ (2-րդ տեղ),
- 2021 թվականի մեծահասակների եվրոպայի առաջնության արծաթե մեդալ (2-րդ տեղ),
- 2021 թվականի մինչև 23 տարեկանների եվրոպայի առաջնության ոսկե մեդալ (1-ին տեղ),
- **2021 թվականի մեծահասակների աշխարհի առաջնության չեմպիոն,**
- **2022 թվականի մեծահասակների եվրոպայի առաջնության չեմպիոն:**

Մալխաս Ամոյանի վերջին ամենակարևոր նվաճումներն են 2021թ.-ի Աշխարհի և 2022թ.-ի Եվրոպայի առաջնության ոսկե մեդալները:

Մալխաս Ամոյանը իր ծնողների, եղբոր և քրոջ հետ բնակվում է Քրիստափոր փողոցի հ. 154/2 հասցեում գտնվող 67.7ք.մ. մակերեսով տանը:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում Մալխաս Ամոյանի անվամբ Երևան քաղաքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Հաշվի առնելով նրա մասնագիտական որակները, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման խիստ անհրաժեշտությունը՝ առաջարկվում է քննարկվող բնակարանը նվիրել նրան, որը լրացուցիչ խթան և ոգևորող հանգամանք կլինի անվանի մարզիկի համար մեր երկիրը հետագա առաջնություններում ներկայացնելու ընթացքում: Հավելենք, որ Մալխաս Ամոյանը 2024թ. Փարիզի Օլիմպիական խաղերում մեր երկրի տիտղոսակիրներից է լինելու:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝**

Հ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող
բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման
կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի
փոփոխություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող
բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ
այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝**

Հ. ՄԻՐԶՈՅԱՆ